ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 304- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 1776- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2021 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքում տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-20 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մինչև 2021 թվականի հոկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 4-րդ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

12.10.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ք. Իջևան
11 հոկտեմբերի 2021թ.

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

11 հոկտեմբերի 2021 թվականի 304-Ա որոշման

**2021 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| Հ/հ | Համայնքի անվանումը | Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք հսկողության բնագավառ | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Իջևան | հոկտեմբերի 20-27 | ՏԻՄ լիազորություններ | Խմբի ղեկավար, | Նարեկ Ղուշչյան |
| | | | | Խմբի անդամ | Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան, Խանում Մարգարյան |
| | | | շրջակա միջավայրի պահպանություն, բուժսանիտարիա և անասնաբուժություն | Խմբի անդամ | Արկադի Ամիրխանյան |
| | | | առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն | Խմբի անդամ | Գուրգեն Հարությունյան |
| | | | արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն | Խմբի անդամ | Սամվել Սուքոյան |
| | | | ֆինանսներ | Խմբի անդամ | Ժորա Խաչատրյան |
| | | | քաղաքաշինություն | Խմբի անդամ | Միսակ Մելքումյան |
| | | | կոմունալ տնտեսություն | Խմբի անդամ | Արմեն Ճաղարյան |
| | | | հողաշինություն և հողօգտագործում | Խմբի անդամ | Համլետ Փիրումյան |
| | | | անձնակազմի կառավարում | Խմբի անդամ | Թերեզա Սաֆարյան |
| | | | կրթություն, մշակույթ | Խմբի անդամ | Հասմիկ Խաչատուրյան, Մարինե Խաչատրյան |
| | | | առողջապահություն | Խմբի անդամ | Ռուբեն Տիգրանյան |
| | | | ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդություն | Խմբի անդամ | Արթուր Վանեսյան |
| | | | տրանսպորտ և ճանապարհաշինություն | Խմբի անդամ | Արտակ Սարգսյան |
| | | | սոցիալական պաշտպանություն | Խմբի անդամ | Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ